

ԳՐԻԳՈՐ ԿԹՂ. ԱՆԱԻԱՐՁԵՑԻ

ՆԱՄԱԿԱՆԻ

(Շար. տես թագմ. 1949, թ. 3-4, էջ 58)

Ոչ նուազ հետաքրքրական է հեղինակին
ՆԱՄԱԿԱՆԻՆ կամ իր թուղթերը, որոնց
առաջինն է,

1. Առ Վոնիփակիոս¹ Ը Պապ, զոր կը
յիշէ Կղ. Կալանոս՝ առանց զայն դնելու:
Կ'երաշխարհէ Հ. Տաշեան², թէ իրենց
մատենադարանի « թուղթ քաջալերա-
կան »ը գրուած (օրինակուած) 1703ին՝
ունի. « Գրիգոր կթղ. այր գիտնական և
սրբակրօն, զրեաց առ փափն Խննչենցիոս
(իմա՝ Վոնիփակիոս) Ը-երորդ, և ի ձեռն
Իւրոց հրեշտակաց³ առաքեաց, որոյ սկիզբն
է. Ամենաբարոյ Հօր մերում, փոխանորդիդ
ի վերայ երկրի՝ Քրիստոսի Տեառն մերոյ
և աթոռակալիդ սրբոյ... զսրբազան զար-
շապարդ համբուրեմ, ես նուստ Գրիգոր
կաթողիկոս Հայոց, հանդերձ եպիսկո-
պոսօք և ամենեքումք զդերք » են:

Առաքելապետին հարազատ յաջորդին,
և բոլոր ձէսերու և եկեղեցեաց սրբազնա-
գոյն Աթոռին հանդէպ՝ Հայաստանեայց
եկեղեցւոյս այդ ամենակատար յարգանքն
ու հպատակութիւնը, ոչ նոր է և ոչ ալ
Գր. Անաւարդեցիով սկսած կամ վերջա-
ցած:

Թողլով առասպելախառն զրոյցները,
քանի մը մերձաւորագոյն և զբաւոր ա-
նուն ու թուականներ յիշենք: Գր. Վկա-
յասիրին⁴, Շնորհաւրոյն և Լամբրոնաց-
ւոյն կարծիքն ու միտք՝ կը համարիմ
արդէն ամենուն ծանօթ է:

Միևիթար վարդապետ Գանձակեցի՝ Գոշ
կոչեցեալ, որ կիլիկեցի էր և լատին կամ
արեւմտեան ո՞ր և իցէ ազդեցութիւն կրած

չէ երբեք, իր նշանաւոր « Գիրք Գատաս-
տանի » (ձեռ) ՄԻԵ զլուխով (տպ. Բաստմ.
Ա մաս, զլ. ձձԳ), եկեղեցական աստի-
ճանները իննամբով թուարկած միջոց, ա-
նոնց վարանելու՝ կը գրէ. « Իններորդ
դաս վերագոյն քան զամենիսեան Պա-
պիաւս, նմանեալ քերտվէից⁵ »: Եկեղե-
ցական նուիրապետութեանց վեհագոյն
բարձր՝ Պապին արուած է. կարծեմ հե-
ղինակին խօսքը մեկնութեան չի կարօտիր:
Այդ վկայութիւնն աւելի մեծ կարեւորու-
թիւն կ'առնու անով՝ որ հեղինակը ձեռ-
նարկած է Ազգին օրինապիրքը զրեւ. որով,
իր խօսքը հոս իրաւասական հանգամանք
ունի: « Պապիաւս » ուրեմն, իրաւունքի
իր բարձրութեան զազաթնակէտէն՝ աւե-
նուե վրայ լիազօր կը ներկայանայ: Ո-
րովհետեւ հեղինակը զինքը կը նկատէ,
ոչ թէ առանձինն երկրի մը, ազգի, ծխի
կամ մասնական դաւանանքի մը զլուխ,
այլ բովանդակ Եկեղեցւոյ, որ է ըսել՝
Քրիստոնէութեան:

Մերատ գունդատապլ (1207-1276) մեր
սպարապետ իշխանն ալ, իր օրինազրբին
մէջ՝ զլ. Կ, այսպէս թարգմանած է Գոշ
վարդապետին սոյն նախադասութիւնը.
« Եւ իններորդ դաս աւար և մեծ օծութիւնն
է՝ որ է Պապն », (ձեռգ. թ. 107, մզմթ.
246, տող՝ 7-8. հմմ. Karst տպ. էջ 86):

Բաց Մերատ դեռ ուրիշ ոչ նուազ բա-
ցայայտ վկայութիւն մ'ունի: Նոյն ձեռա-
գիրը, գրուած 22 (= 1331ին), 70դ զլու-
խին մէջ աշխարհական իշխանութեանց
զանազան աստիճաններն և անոնց իրա-

ւունքները դնելէն վերջ, ՀԱ (= 71դ) զլու-
խով՝ կ'անցնի եկեղեցականներունը
թուարկելու. ի միջի այլոց՝ կը գրէ.
« մոլոզոնք և այլ այսպիսիք յերիցնոյ
դատին և աքսորին: Եւ եպիսկոպոսք՝ ի
կաթողիկոսաց (իմա՝ դատին և աքսորին).
և կաթողիկոսք՝ ի Պապէ » (իմա՝ դատին
և աքսորին) են: Հոս զուտ իրաւասական
իշխանութիւնն է որ կը շեշտէ: Կաթու-
ղիկոս մը դատելու և զինքը պատժելու
իրաւունքը՝ հեղինակի մտքին մէջ միայն
Պապին վերապահեալ է: Կաթողիկոս,
ազգի մը կրօնական բարձրագոյն զլուխն
է. և անա այդ զլուխը՝ ուղղակի Պապին
ստորակարգեալ է: Այդ բաժնագօր ՀԱՅ
իշխանն ուրեմն, Միթիթար Գանձակեցւոյն
երկու նախադասութիւնները, ՄԻԵ և ՄԻԹ
զլուխներէն թարգմանելով՝ 2ձԳ-էն (1265)
ի վեր այսպէս կը հասկնար ու կը գրէր,
և ոչ ոք կը յանդգնէր, ազատութեան ու
փառաց այն շրջանին, զինքն իբր օտա-
ւամէտ կամ լատինամիտ որակելու:

Ահա թէ Գրիգոր Զ Ապիրատ (1194-
1202) ինչ կը գրէր առ Խննովկենտ Գ-
Քահանայապետ. « Գերակատար՝ զլու-
փոխանդ Քրիստոսի... պետդ եկեղեցւոյն
Հոովմայ՝ որ է մայր ամենայն եկեղեցեաց
աշխարհի... Գրիգոր ծառայ Յիսուսի
Քրիստոսի... և որդի՝ սուրբ եկեղեցւոյդ
ձերոյ, որ է հիմն օրինաց ամենայն քրիս-
տոնէից » են: Նոյնը կը կոչէ Պապը՝
« Հոգեւոր հօրդ իմոյ ». և անոր նամակ-
ները, « եղար ի վերայ աչաց և երեսաց
մերոց ». և, « վասն որոյ կամք նուաս-
տութեանս մերոյ այսպէս եղեւ և լինիցի
մինչեւ յաւիտեանս... միշտ հաստատե-
ցուք ընդ հնազանդութեամբ և իշխանու-
թեամբք ձեր զսիրելի որդին մեր զթա-
զաւորն Հայոց⁷ »: Լեւոն Ա թգ, օգնու-
թիւն խնդրելով մի և նոյն Ս. Պապէն, իր
23 Մայիս 1199ի նամակով, կ'ըսէ.
« կամիմք և փափագանօք ցանկանամք
ածել, օգնականութեամբն Աստուծոյ, ի
միարանութիւն սուրբ եկեղեցւոյդ Հոով-

մայ, զշնորհեալ մեզ յԱստուծոյ զբովան-
դակ աշխարհատարած թագաւորութիւնս
մեր, և զամենայն ուրեք սփռեալ ազգս
Հայոց⁸ »: Յովհաննէս Է կթղ. Մեծարարոյ
(1202-1203), նոյն Գահանայապետին
կը գրէր. « Յովհաննէս կթղ. ամենայն
Հայոց և հնազանդեալ սրբութեանդ, ող-
ջոյն հանդերձ հնազանդութեամբ և պա-
տուով »⁹ են: Ոչ նուազ մտերիմ են, հպա-
տակութեան հոգով լի և անկեղծ, մեր
կոստանդին¹⁰ Ա. կաթողիկոսի (1221-
1267) յարաբերութիւնները Հոովմայ Ս.
Աթոռին հետ: Սա, սիրով ընդունեցաւ
Գրիգոր թ Պապին (1227-1241) ազգա-
լարութիւնը Հիւանդաց Օծման շուրջ:
Գրիգորաց ողջունեց նաեւ, ինքը և հայ
նուիրապետութիւնը բովանդակ, Խննով-
կենտ ԳԻ (1243-54) Հոգւոյն սրբոյ ի Հօրէ
և յՈրդոյն բղխման¹¹ վարդապետութիւնը,
զոր Ս. Գրոց վկայութիւններով հաստա-
տելէն վերջ, մեծ հայրապետն ու հայ
նուիրապետութիւնը բոլոր՝ կը կնքեն.
« Այսպիսի վարդապետութիւնս՝ ընդունելի
է յեկեղեցիս հայաստանեայց... և մեք ի
սոյն հաւատ հաստատեալ կամք՝ շնորհօք
Երրորդութեան սրբոյ »: Այս մասին, կար-
գալ Կիրակոս Գանձակեցի պատմ. էջ 173,
186-89:

Այս գեղեցիկ յարաբերութիւններէ վերջ,
վրան հասաւ 1289ի միջադէպը, ուր
փրանկիսկեան կրօնաւորի մը առ Նիկո-
ղայոս Գ Քհպ. հայոց մասին տուած թիւր
տեղեկութիւնները¹², և Սրբազանին նոյն
ուղղութեամբ Ազգիս զրած վարդապետա-
կան նամակները, մթնոլորտը բաւական
ամպոտեցին: Բայց կը տեսնենք Կոստան-
դին¹³ Բե ղէպքէն և Ստեփանոս ԳԻՎ վերջ՝
թիւրիմացութիւնները կը պարզուին. կու-
գայ Գրիգոր Է կաթողիկոս նոյն բարի
տրամադրութիւններով, (և բիշ մը չափէ
աւելի եռանդեամբ), իր նախորդաց սկսած
զաղափարը կամ գործը մշակելու: Ասոր
գործելակերպը՝ նախորդներուն կը հաս-
տատէ. և ինքն այսպէս պիտի չվարուէր,

եթէ տեսած և լսած չըլլար թէ անոնք բոլորն ալ նոյնպէս գործած են:

Ասից ուրեմն կարելի է ստոյգ կերպով հետեցնել, թէ մեր նախնիք, Հոսովմայ կամ լատին եկեղեցւոյն հանդէպ հակառակութիւն մ'ունեցած չեն երբեք, այլ իրենց խնդիրն ու վէճը Հոռոմոց կամ Յունաց հետ էր:

Մեզի պէս հասկցած է խնդիրը նաեւ Գարեգին Արքայ Յովսեփեան՝ զխոնական մարդը, որ կը գրէ, թէ՛ Պոռեանք և Օրբելեանք « իրենց վարդապետներով բուն պայքար են մղում Գր. Անաւարզեցու և նորա յաջորդներ ղէմ, որ հակուած ընդ զանդակաւ աւանդութիւններ մտցնել հայ Եկեղեցու մէջ: Տես Նիւթեր և Ուսում. Պրակ Գ, տպ. Նիւ Եորք 1944, էջ 121, սիւն 1 »:

2. Թողք առ Հերում Բ, որ կը սկսի. « Գրիգոր ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ... հոգեւոր և անդրանիկ որդւոյդ, ճշմարիտ քրիստոսասիրիդ, տեսնու մերոյ թագաւորահօրդ Հեթմոյ, աւագ պարոնիդ ամենայն Հայոց ¹⁴ »: Նամակը ժամանակին ժողովրդական լեզուով գրուած՝ ճոխ է եկեղեցական և հայրախօսական տեղեկութիւններով: Հետաքրքրական է մանաւանդ, ինչպէս Հ. Ղ. Ալիշան ¹⁵ կը ղիտէ, որ կը յիշէ իր « քեռոյն » (Յակոբ կաթողիկոսին) գրած « Հաւատոյ արմատ »-ը, զոր շատերը Յովհ. մայրագոմեցւոյն (Է զր.) կ'ընծայէին. « և կայր ի մօտս, կ'ըսէ, իմ քեռոյն գիրքն, որ է հաւատոյ, արմատն »: Իր այս թղթին նպատակն էր թախանձել թագաւորահայրէն՝ որ եպիսկոպոսաց ժողովին գումարումը փութացնէ, ծիսական իր առաջարկներն ընդունիլ տալու համար: Նոյն ղիտումով գրած է նաեւ

3. « Օրպելին, որ է Սիւնեաց Արհի. որպէս հոգեւոր իշխան գալով՝ նոյնպէս մարմնաւոր »: 4. Առ « Տէր Յովհաննէս առաքելոց (վանքի) եպիսկոպոս: 5. Յովհ. Արքեպ. « Բջնեցւոյն »: 6. « Վարագացեացն », այսինքն՝ անոնց վանահօր կամ

առաջնորդին: 7. Առ « Եսային (Նչեցի) որ ամենայն արեւելից վարդապետն է և դասասաց... յիշած է, կ'ըսէ, զիմ այլ թղթերն... և այս տարի գրել է առ իս, թէ՛ մի մեղադրելու թէ յամեցի. զեռ չէ վճարել: 8. Առ Չարսարիա Արքեպ. Արտագու, և առաջնորդ ուխտին Թագէտի առաքելոյ: 9. Առ Յովհ. վրդ. Երզնկացի: 10. Առ Աւշին ¹⁶ իշխան Կանչոյ բերդին (1294ին), իբր պատասխան իրեն եղած նուէրներուն և շնորհաւորութեանց: 11. Նոյն հայրապետին « Հաւատոյ զուանու թիւն »-ը, զոր Հեթումի թղթին կցած էր, և զոր կարելի է տեսնել Կղ. Կալանոսի հար. Ա, էջ 461 եւն: Ասոնցմէ միայն Հեթումիին ու Վոնիփակիոս Բ.ին գրուած ներուն բովանդակութիւնը մեզի ծանօթ է. միւսները ¹⁷ (թ. 3-9), ժողովէն 1-2 տարի առաջ ղրկած էր յիշեալ վարդապետներուն՝ իրենց միտքը պատրաստելու սիւնհոդին մէջ վիճուելիք նիւթերուն շուրջ: Հետաքրքրական ըլլալու էր առ Աւշին Կանչոյ իշխանը գրածը, բայց զեռ աւելի՛ արեւելեան վիճակաւորաց ուղղեալները. որոնք անշուշտ ձեռագրաց մէջ ցիր ու ցան՝ յուսանք զէթ պահուած ըլլան, և երանի՛ թէ օրին մէկն անոնք եւս լոյս տեսնելու բախան ունենան:

Ասով կը փակենք հեղինակին Արձակ գրութեանց մասին մեր յօդուածաշարքը: Հաւասարապէս հետաքրքրական են իր Շարականները, որոնց ուսումնասիրութիւնը՝ թէև շատոնց պատրաստ, սակայն ներկայ տարւոյս մէջ պիտի չկարենայ լոյս տեսնել, թերթիս էջերը բռնուած ըլլալուն:

Հ. ԳՐ. ՍԱՐԳՍԵԱՆ

(Շարունակիլի)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

(1) Եւ ո՛չ առ « Իննովկենտիոս Բ » ինչպէս սխալմամբ գրած է Ուցչլա. Հր. Աճառեան, « Հայ. Անձ. բառարան », հտ. Ա, էջ 586, թ. 391. Որովհետեւ մեր այս Գրիգորն Ինչպէս կրնար թղթակցել Իննովկենտ

Բ.ին հետ (1482-1492), որ երբէ կրեթէ երկու դար յետոյ կ'ապրէր: Մինչ Վոնիփակիոս Բ (1294-1303), ճիշտ մեր հեղինակին ժամանակակից է, որով կրնային իրարու հետ թղթակցել. Արղէն Հ. Մ. Չամբ. հտ. Գ, էջ 276, և Կղ. Կալանոս, հտ. Ա, էջ 421, 423 եւն, Վոնիփակիոս ութերորդ գրած են: Հ. Տաշեան, էջ 1073, ս. 2, նուազ ճշգրտեամբ, կը գրէ « առ Իննովկենտիոս Բ (Վոնիփակիոս), միշտ վերջինս փակագծի մէջ անուելով: Վստահ ենք թէ Ուցչլա Հր. Աճառեանի շփոթութիւնը՝ Տաշեանէն յառաջ եկած է: Սա, ուզած է ձեռ. թիւ 12ի մէջըրումը ճշգրտելու, որով թիւրիմացութեան տեղի է տուած. մինչ, պէտք էր գրել « Իննովկենտիոս Բ » (Իմ Բոնիփակիոս Բ), որով ընթացողը չէր սխալել: Մեր Գրիգոր Չ. Ապիրատ կթղ. (1194-1202) գրած է Իննովկենտ Գին (1198-1216). չեմ կարծիր որ այդ նման անուններն իրարու հետ շփոթած լինի Աճառեան, Համ. Կղ. Կալանոս, հտ. Ա, էջ 346-357.

(2) Տաշեան, էջ 110, ս. 2, ձեռ. թ. 12, թղ. 43 ա, (3) Հ. Մ. Չամբ. Գ, էջ 296: Նոյնը կը հաստատէ նաեւ Ս. Պապն իր առ Գրիգոր պատասխանով « Ex literarum tuarum tenore et relatu tui nuntii, qui Nobis praesentavit easdem ». Իր գերբ Գ, թղ. 271, Համ. Կղ. Կալանոս, հտ. Ա, էջ 423.

(4) Գր. վկայասիրի (1113-1166) մասին, Հր. Աճառեան իր Հայ. Անձ. բառ. հտ. Ա, էջ 559, թ. 180 գրած է. « Ասաջարկուեց նրան (Ս. Պապի կողմանէ) փոխել Հայ եկեղեցու ձեւերը. Գրիգոր անուշաղիք Թողուց այս կէտը »: Տուած իր այդ տեղեկութիւնը՝ պարզապէս երեւակայական է և ինքնաշար. որովհետեւ ո՛ր գրուած է. թող ցոյց տայ աղբիւրները, թէ կրնայ Աղղիք պատմութեան մէջ այսպէս բան չկայ: Չամբեան, Ալիշան, ինչպէս նաեւ Օրմանեան (Աղղուց, էջ 1390, թ. 953), որոնք մեր հին հեղինակները, թէ ոչ աւելի զէթ Աճառեանի չափ կը ճանչնան, ամենեւին այսպիսի սկիսակ մը չունին. Իր գրածն ուրեմն հակապատմական է և անտեղի. Եկեղեցին, լեզուներու տարբերութեան հետ՝ ձիւնից այդ գանազանութիւնը, իր հրաշակերտ միութեան իբր չեղաղ զարդ նկատած է միշտ, և անոնց անթիւր պահպանութիւնը՝ խոտի պահանջած է ազգերէն և կը պահանջէ: Բաւ է որ իրենք, արեւելցիները, իրենց սուանդութիւնները յարգեն ու չխանգարեն. ապա թէ ոչ, Հոսովմայ Ս. Աթոռը՝ անողոր պահպանողական է յաւէտ այս խնդրոյն մէջ:

(5) Պր. Շաւարշ Նարդուհի (1940) Յառաջին քանի մը յօդուածներով (Յունուար 19, 21, 31, և Փետրուար 2, 9 և 29ով) Գատաստանաբերի մասին եւս գրեց: Կը դժուարէր նա սոյն նախադասութեան հարազատութիւնն ընդունելու: Նոյնպէս, մատենագրարանի րնագիր ձեռագրին հնութիւնը տարակոյսի կ'ենթարկէր իր նոյն յօդուածով (թիւ՝ 21 Յունուար): Երկու հարցերուն նկատմամբ կ'ուզեմ վստահացնել հոս « Յառաջ »-ին բազմավաստակ աջակցելը, թէ՛ նախ Պապին վերաբերեալ պարբերութիւնը, ընդ որ ձեռագրերը առանց ո՛ր է

բացատրեան, կը զննու Միայն Բաստամեանց վարդապետը, արամարանելու ամենէն աւելի տարօրինակ և աննորմալ ոճով մը, իր զետական հրատարակութեան էջ 259 և թիւ 540 ծանօթութեամբ, կը գրէ. « Այս կանոնը՝ սաստիկ եղծուած է անհարազատ ձեւերով... Արճատողը եղել է անշուշտ կաթողիկոսից մէկը » եւն. լուկ կարեկցութեան համար իր յաջորդ բառերը զանց կ'ընեմ, քանի որ բանասիրութեան շատ հետեւ են անոնք: Եթէ ուրիշ մ'այս բանն ըսած ըլլար, համբերութիւն. բայց Բաստամեանցի համար, որ համեմատական կանոնաւոր գործ մը կատարած է, այդ ամենեւին ներքիլ չէր: Սկսեալ իր ձեռագրէն, ընդ որ զբազիրներն, ինչպէս ըսի, ունին Պապի վերաբերեալ նախադասութիւնը կամ կարգը, որ խնդրական ճառքն լրացուցիչ և անհրաժեշտ մաս կը կազմէ: Թողունք որ արղէն Սմբատ սպարապետը (1265ին), հեղինակէն հազիւ կէս դար մը վերջ, Գողնի զերբը համատեղած ասան, չէ մոռցած իննամբով նաեւ այդ « Իններորդ դաս »-ը թարգմանել: Ուստի ցաւով պիտի ըսենք թէ յիշեալ հրատարակելը զետակցարար կը սխալի. քանի որ իր աչքովն իսկ տեսած է թէ իր ճանչցած բարբ. ձ. ունին այդ խօսքը: Ապա թէ ոչ՝ պէտք է ինքն ենթադրել, որ այդ բոլոր ձեռագրաց օրինակները՝ կաթողիկէ լին, և ինքը, Բաստամեանց, եւր կաթողիկոս մը գործն է հրատարակելը, ինչ որ չէ կարելի ենթադրել:

Մեր ձեռագրին (թ. 1237) հարազատութիւնը ցուցնելու համար, առ այժմ կը բաւականանամ մէկ ազատ ցոյցով միայն, (որովհետեւ այս բանը մեր խնդրէն դուրս է), և կը յուսամ որ սա աւելի քան համոզիչ ըլլայ: ԺԲ-ԺԳ դարու զբազիր մը կը յիշէ մեր այս ձեռագրին վերջին պարակ պարունակութիւնը, որ միայն է իր տեսակին մէջ: Այսինքն, Միւթար ինքնին իր այս գործին օրինակ մը կը գրէ Գրիգոր... անուանով մեծ մէկու մը, և մեր այդ թ. 1237 ձեռագրին սկիսակով, ընծայուածին վերջին յիշատակարանին մէջ կ'ըսէ. « զրեալ էաց և սակաւ ժամանակագրութիւնն ընդ դասատանի զորոցս ի մերն օրինակ, զոր անպատշաճ վարկայ և սաս գրել, զի յատուկ և այդ կացքէ զերբ. սկիզբն արարաց ի կատարածէ պատմութեան Աղուանից զարհայրապետացն, մինչև ցայն որ այժմ ունի » եւն: Արղ, այդ « Շարք հայրապետացն Աղուանից », որ մի և նոյն ասան՝ ժամանակագրութիւն մ'է, և մի միայն մեր թ. 1237 ձեռագրին մէջ կը գտնուի, զոր հեղինակն իրենք՝ « մերն օրինակ » կը կոչէ: Մէջերած սոցերը շատ յայտնի կերպով մեր ունեցած ամենահին օրինակը կը մատնանշեն և ուրիշ ոչ մէկը: Յիշեալ հազուադէպ ժամանակագրութիւնը, հրատարակած է Հ. Ղ. Ալիշան, Հայրապետում հտ. Բ, էջ 338, յօդուած ՄՂԲ (= 292) և էջ 276, յօդ. ՄՁԲ (= 282):

(6) Կղ. Կալանոս, հտ. Ա, էջ 346:
(7) Անդ՝ էջ 352-53:
(8) Անդ՝ էջ 357:
(9) Անդ՝ էջ 365, և Հ. Մ. Չամբ. Գ, էջ 175:

ղանդն, և լինի միտքան ընդ Քրիստոսաց, օգնականու-
թեամբ նոյն Պարոն Հեթումյ թագաւորին՝ որ յառաջն
աքորեանց զնա յաղագս նոյն աղանդոյ աղբարմաշու-
րեան, և յայնմ վայրի հաւանեալ՝ օգնական լինի »: Եւ
էջ 155, « 2ԾԳ (= 1307) Տէր Կոստանդին Կեսարա-
ցին, որ է նոյն Պրանդործն՝ Կատուղեցի աքորեալն է
Հեթումյ դարձեալ կալու զաթոնն ամս ԺԶ (= 16):
Պատմութենէ առնուած՝ Զախըարիէ փաստեր են ասոնք,
և կը բաւին Օրմանեանի և նմանաց վարկածները
հերքելու: Բայց ահա ուրիշ վկայութիւն մը որ նոյն
բանը կը հաստատէ: Մասնադարձին թիւ 1113, Սոյ
մագաղաթեայ ընտիր մաշտոցը, գրուած 2ՂԳ (= 1345թն),
թղ. 405 բ, ս. 1, կաթողիկոսաց շարքին մէջ՝ Յակովբ
Անն վերջ, 70րդ՝ կը գնէ « Տէր Կոստանդին է Սոյ,
ամս Լ (= 30) ընդ անկն և ընդ տէրութիւնն »: Ապա,
Ստեփանոսէն և Գրեգորէն վերջ 73րդ կէտս. « Տէր Կոս-
տանդին, որ եպիսկոպոս (էր) մայրաքաղաքին Կեսարայ,
յաւուրս մեծի հինգ շարքին, է թուին 2ԾԳ (= 1307),
որ էր այր հեզ և խոնարհ, կացեալ ամս ԺԶ (= 16)
փոխի »: Ասոր յաջորդներ կը գնէ Կոստանդին Լամ-
բրոնացին, Յակովբ Բ Սեպեմ ԼԵ, Խնչպէս կը տեսնենք,
Անեցւոյն և մաշտոցին՝ երկէցս յիշած Կոստանդինը՝
նոյնն է: Ապա թէ ոչ շատ տարօրինակ պիտի ըլլար
կարծել, որ երկու տարբեր Կոստանդիններու վրայ կը
խօսին և երկուքն ալ ճիշտ 16 տարի կը տիրեն: Եթէ
Կոստ. Բ. վերաբերն ընտուած չըլլար, ժամանակագիրն
ինչպէս կրնար գրել « ընդ անկն և ընդ տէրութիւնն
ամս երեսուն »: մի միայն Կոստ. Բին համար կրնար
գրել « ընդ անկն », քանի որ իրմէ դատ, զէթ այն
չըլլանին, պաշտօնէն « անկեալ » Կոստ. ԿԺԳ. մը չկայ:
Երբ մէկը չորս տարի միայն կաթողիկոս եղած է,
ինչպէս կարելի է 30 տարի պաշտօնավարած կոչուի:
Մաշտոցը, նաև զինքն « է Սոյ » կոչեց, և ապա « է
Կեսարիոյ », որուն պատճառը տուած ենք Բզմվ. 1947,
էջ 203, ս. 1, տող՝ 2-5: Պատմիչներն ասկից աւելի
որոշ չեն կրնար գրել: Եւ սակայն Օրմանեան (Ազգպատմ.
թ. 1170 և 1245) կը գրէ. « Անեցւոյն շարունակողին
յաւելուածը բոլորովին » « մասցածին և անհիմն » « և
ինքնահնար բացատրութիւն է »: Ճիշտ չի թուիր ըստը:
Կը սխալի նաև Ո՛րցւոյ. Հր. Աճառեան « Հայ. Արժ. բառ. հտ. Բ, էջ 663, թ. 83 գրելով. « Հեթում
Բ ուզելով կաթողիկ գաւանդը տարածել Հայոց մէջ,
և իր գէմ գանձելով Կոստանդին հակաակոթիւնը՝ զահ-
ընկէց արեց նրան (1289թն): Պատմութիւնը մէկ ան-
գամէն աւելի, տեսնենք, ասոր ճիշտ հակառակը ցոյց
տուաւ. այսինքն, թէ Կոստանդին Բ իր առաջին ընտ-
րութեան սկզբէն իսկ եղած է առաջին աղբարմաշ Սոյ
մէջ, և իր այդ աղբարմաշը քանակապէս պատճառաւ՝ Հեթում
զինքն աքորեց: Նոյնպէս, պատմութեան բացայայտ
վկայութեան զէմ կը մեղանչէ յիշեալ յարգելի փրօֆէ-
սորը (անդ՝ էջ 664) ծռելով, թէ « շիթութիւն և նոյնա-
ցում է (Աւելան՝ զԿոստանդին Բ.) Կոստանդին Գ.
Կեսարացու հետ »: Ժամանակակից պատմիչը 4 անգամ

կրկնեց՝ (անս վերջ), թէ Կեսարացին ու Կատուղեցին՝
Հեթումէ աքորեալ մի և նոյն անձն է: Մեր երևա-
կայութիւնը՝ կամ փափաղները էնն որ պատմութիւնը
պիտի շինեն, այլ հեռուոր անցելոյն մէջ պատահած
իրականութիւնները՝ ակնհասեալ կամ ակնհասեալ ան-
կաշկանդ մտքերէ՝ զրի առնուած. ապա թէ ոչ՝ բանա-
ստեղծութիւն պիտի կոչուէր և ոչ պատմութիւն: Օր-
մանեանի առաջարկած ոճով՝ ողջմտութեան հիմը կը
խախտի և պատմութեան զեղեցիկ շինուածը կը կործանի,
քանի որ պիտի ուզենք զայն՝ մեր ուզած ձևով փոփո-
խել: Մեր կարծիքով Ազգպատմութեան պահանջը շատ
անբնական է և բռնազրօս, և հետեւաբար՝ ո՛չ մէկ կեր-
պով ընդունելի: Կ'ուզէ զիպուածներու օրով ապրող ու
զրոյ հեղինակին չհաւատանք, և իր խօսքին միայն կա-
րեւորութիւն տանք, որ ինդրական անձինքներէ 600
տարի յետոյ կ'ապրի: Այդ չափազանց է:
Կոստանդին Բի զահագրիւմը՝ իր հակալատիւնու-
թեան կը վերադրէ Օրմանեանի Պատմութիւնը (Անեցի՝)
տարբեր կերպով կ'արտայայտուի այս մասին. « Որով-
հանա միութեան առաջին աղբարմաշ եղաւ Սոյ մէջ,
անոր համար Յ տարի վերջ՝ Հեթում զինքն աքորեց »:
Աղբարմաշը ինքն և ուրեմն աքորելն պատճառաւ: Մերը կը
կարծենք լատինութեան հարց չկայ հոս, այլ Հեթում Բ
փրանկիսկեան կրօնաւորին հետ բարեկամաբար խօսած
միջոց, համակրանք յայտնած ըլլալ Հոսովմայ-եկեղեցւոյն
կարգ ու սարքին: Կրօնաւորը, առաքեալ մը երեւնալու
սնտախ մարմաջէ մղուած, հայ նուիրապետութիւնը կ'եր-
թայ իր ուզած ձևով կը ներկայացնէ Ս. Պապին, և
Նիկիոյցոյ Գ, խարուած, նոյն ուղղութեամբ կը գրէ
Հայոց, կարծես նոր քրիստոնէութիւնն ընդունէին կամ
չար հերձուածէ մը դառնային: Կոստանդին, իբր ազգին
Հայրապետ, հարկաւ, ասոր վրայ կը վշտանայ, և աստի-
ճանին՝ արժանավայել արիւթեամբ, կերպով մը կը
յանդիմանէ թագաւորը, « Այս տեսակ ինդիլիներ նախ
ինձի պէտք էր ըսել, Տէր արքայ, որպէս զի ազգն ու
եկեղեցի չնուստանան օտարին սխալ անդեկութիւննե-
րով »: Կը համարիմ ասոր նման իրաւական վէճ մը պէտք
է տեղի ունեցած ըլլալ կաթողիկոսի և վեհապետին
միջև. և որովհետեւ, զմբախտաբար, իրաւունքը, նաև
հին աստիճանը, ընդհանրապէս զօրաւորին է, սուրբ և
հեղաբարոյ Հայրապետը՝ Յովհաննէս Մեծաբարոյին
պէս, յանդիմանի, պաշտօնագրեր կը յայտարարուէր
տարիներ յետոյ անոր պէս վերընտրուելու համար:
Կը կրկնեմ, լատինի ինդիլի չկար. այնպէս որ Ստե-
փանոս Օրբել. հտ. Բ, էջ 195, զԳրեգոր Անաւարդեցին
յանցաւոր կը զատէ, ոչ թէ լատինաց հետ բարեկամու-
թիւն մշակելուն, այլ Յունաց կամ Հոռոմոց յարաբե-
րութեան մէջ մտնելուն, « և զիսպան... առ պատրիարքն
է Ս. Պոլիս » զրկելուն, և թէ՛ կ'ուզէր նա « զմիտա-
նութիւն Հոռոմոց ընդ մեզ: Ընդ « հակառակին, պատուով
կը խօսի (հտ. Բ, էջ 230) լատինաց մասին՝ « մեծ Պապն
Հոսովմայ ». հակառակորդ մը այսպէս պիտի չգրէր. Հոռոմ
անունն է ուրեմն որ Ստեփանոսի, ինչպէս ընդհանուր

կերպով մեր ազգին (զէթ այն ատեն) ակնհաս իտիթ
կը հնչէր, և ոչ թէ Պապին կամ Հոսովմայ:
Օրմանեան և Աճառեան, Անաւարդեցոյն յաջորդ կը
գնեն զԿոստ. Կեսարիոյ եպս. զոր Գրեգոր նուիրակ
զրկած էր արեւելեան Հայաստան, մօտալուս ժողովրդին՝
մտքերը պատրաստելու: Այս ինդրոյն վրայ մտածելն
անգամ աւելորդ է, քանի որ պատմիչը շատ որոշ գրած
է (էջ 155) « Տէր Կոստանդին Կեսարացին... աքորեալն
է Հեթումյ »: Այսպէս, բացարձակ ստուգութեամբ, Գրե-
գորի յաջորդը կը մնայ Կոստանդին Բ, երկրորդ ան-
գամ ընտրուածը:
Անեցին « առաջին աղբարմաշ » կը կոչէ զԿոստ. Բ.
և իր գործը՝ աղբարմաշը ինքն: Կարեւոր է մեզ այս
բառին բնութիւնը: Հայկազեան, Զախըարեան և Առ-
ձեան մեր բարոյրները՝ չունին այդ բառը: Հր. Աճառ-
եան և Ստ. Մալխասեան՝ Օրմանեանին (թ. 1170)
հետեւելով, զայն « հաւատափութ, հայութեանէ՛ կաթու-
նախատական մակդիր մը կը համարին: Իսկ Հր. Աճառ-
եան « Աղբարմաշ »-ին շիթութ ձև մը կը համարի զայդ. բայց
աւելի համաձայն են (նոյները) կարծելու, թէ սճի-
ւաբարձաւ — նաև նաև փոխադրուել նշանակէ: Այդ բոլոր
բացատրութիւններն, ըստ մեզ, յարմար չեն: Թէև ատոր
ստուգարանութիւնը տակաւին կ'անդիտանամ, սակայն
կարծեմ աղբարմաշ բառին իրական և բուն իմաստը
է հոս, զորմէ, քարոզ, փրօփակախոս ընող, ունիրու:
Բայ այսմ Անեցւոյն (էջ 152) խօսքը, « Կոստան-
եցի առաջին աղբարմաշ է Սիս », ըսել է = Կոստան-
դին (միութեան) առաջին՝ զորմէ կը եղաւ Սոյ մէջ: Ել
153, « Աքորեաց զնա յաղագս նոյն աղանդոյն աղ-
բարմաշը քան = Նոյն աղանդը (միութիւնը) քարո-
քարմաշը քան = Նոյն աղանդը (միութիւնը) քարո-
քարմաշը (փրօփակախոս ընելուն) համար՝ զինքն աքորեց:
Իսկ թովմայ Մեծոփեցւոյն էջ 15 « Մարտեան ընդդէմ
ընել է՝ Երնջակ գաւառին Քարոյի (Եղբարց) զէմ
կուռեցաւ. համար. Օրման. Ազգպատմ. Թ. 1179, որ Գո-
մինիկեանը Քարոյից Եղբարց ևս կը կոչուին, Նոյն
էջին մէջ, « Բագում հակառակութիւնս կրեաց յաղբար-
մաշից (է Նախճուստու գաւառ): կը թարգմանուի (Նա-
խճուստու գաւառին մէջ) շատ հակառակութիւն կրեց
Ունիթոս կամ Միտարմաշ կամ Քարոյից Եղբարցներն:
Ել 371, « Եկն առ նա աղբարմաշ արեղայ մի » =
Ունիթոս արեղայ մը քովը եկաւ: Ել 38, « Եկին երկու

վարդապետք աղբարմաշ, այսինքն՝ « Երկու Քարոյից
(զոմինիկեան) արեղայնք եկան: Ել 39, « Աղբարմաշ
ուրացողը ճշմարտութեան » = ճշմարտութիւնն ուրացող
Ունիթոսներ: Ել 16, « Գեղարկուր կղեալ է սանամօրէն
Երմէ յաղբարմաշ. որ է ըսել, « Ունիթոսաց (աշակերտ
եղող) սանամօրէն թունաւորուցաւ: Ել 39, « Կամէին
աղբարմաշ լինել ». կը նշանակէ՛ « Կ'ուզէին Քարոյից
Եղբարց (կամ) Ունիթոսներուն աշակերտել, ևն: Թով-
Մեծոփեցւոյն վերջին 2 օրինակները, կարելի է հասկնալ
նաև « Կաթողիկ », բայց միշտ բացատրուած ձևով:
Աղբարմաշին տուած մեկնութիւնս, միւսներուն տուածն
աւելի պարզ և հասկնալի կը թուի: Ասով կը հետեւի
թէ Կոստանդին Բ միութեան կողմը եղած է սկիզբէն
և Հեթում Բ զմուտութիւն յարուցանող. ինչ որ Ա-
նեցւոյն ըսածը կ'արդարացնէ: Հեթումի մասին, արդէն
Չամչեան, հտ. Գ, էջ 308 կը գրէ. « Հեթում էր այն-
չափ հաճեալ ընդ կամս Գրեգորի, մանաւանդ թէ պա-
տուէր ևս յղեալ էր առ նա՝ զգուրութեամբ վարել, զի
մի՛ խոսիւթիւն ինչ ծագեցի ի մէջ ազգին »: Այս
արբայն, որ ըստ « Արարատ »-ի (Արմենիան, 1947,
էջ 139, ս. 1) « զուրկ էր զիւրազգիտի յատկութիւն-
ներէ », ինչպէս Անաւարդեցւոյն օրով, կ'երեւի թէ
սառալ ևս Կոստանդին Բի ատեն, ժողովրդական
խլրատմեքու առիթ չտալու համար՝ խոհեմ միջոցներ
հրամայած ըլլալ: Սոյ 1307ի ժողովը, ինչպէս տե-
սանք, այն ինչ վախճանած կաթողիկոսը՝ կտակի պէս
թողուած նամակի մը վրայ գումարել տուած է: Ուստի
կրկին կը հաստատուի՝ թէ Կոստանդին ու Հեթումի
միջև տեղի ունեցած վէճը լատինականութենէ աւելի՝
իրաւական ինդիլի մը պէտք է եղած ըլլալ:
(14) Կղ. Կալանոս, հտ. Ա, էջ 435-51. Նոյն թղթէն
Տաշեան (էջ 110-111) ընդարձակ մաս մը յառաջ կը
բերէ:
(15) Հայագատում, Պատմիչը, էջ 299, հմմ. Հ. Մ.
Չամչ. Գ, 331:
(16) Այդ իշխանի մասին Օշնի ժամագիրքը, տպ.
էջ 100. ս. 2, կը գրէ. « Գաւ եղև Հեթում (Բ) Թա-
գաւորն յիւր իշխանացն, որ էին գլուխը՝ Պր. Հեթում
Կաթողիկոսն տէրն, և իր աղբարմաշ Պր. Աւշին Կանչոյ
տէրն » են (1294-95թ) շուրջ, Հմմ. Հ. Չամչ. Գ,
293:
(17) Յիշած է գաստնը առ Հեթում զրած իր թղթին
մէջ, Կղ. Կալանոս, հտ. Ա, էջ 441 և 444. Հ. Մ.
Չամչ. Գ, էջ 304-305:

